

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 05 » « 02 » 2018թ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի, (այսուհետ՝ Շնորհապու), որը գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Զ. Մուրադյանի (այսուհետ՝ Շնորհառու), որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Շնորհապուն պարտավորվում է Հայաստանի Հանրապետությունում «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը» ծրագրի իրականացման նպատակով (04.02.01.24) Շնորհառուին հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 300 000 000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումար, իսկ Շնորհառուն պարտավորվում է Ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Ծրագրով նախատեսված Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Շնորհապուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 Ծրագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը:

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար փրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրին:

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Շնորհառուն իրավունք ունի՝

2.2.1 իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելի գումարը:

2.2.2 Շնորհատուի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3 Շնորհատուն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին:

2.3.2 կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրին և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4 Շնորհառուն պարտավոր է՝

2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակում Շնորհատուի կողմից փրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում:

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3 կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն,

2.4.4.1. ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունը (հավելված N 2) ներկայացնել մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ ամսական հաշվետվությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը՝ համաձայն սույն պայմանագրի N 4 հավելվածի, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Շնորհատուն պարտավորվում է անվճար՝ Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Շնորհատուն Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շնորհատուին տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն պայմանագրով Շնորհապատճեն պարտավորվում է Ծրագրի կատարման համար Շնորհառուին, որպես դրամաշնորհ վճարել՝ 300 000 000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածին համապատասխան: Ծրագրի գնից 25 000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամը Շնորհապատճեն փոխանցում է Շնորհառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

4.2. Հաշվետու ամսվա փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ՝ համաձայն N 4 հավելվածի Շնորհառուի կողմից ներկայացված հաշվետվություններն ընդունելուց հետո, Շնորհապատճեն հաջորդ ամսվա վճարման ենթակա գումարը, որպես կանխավճար վճարում է Շնորհառուին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Եռամսյակի ավարտից հետո Շնորհառուին վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին N2 հավելվածով ներկայացված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշներին համապատասխան՝ համաձայն N 3 հավելվածի:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պարզաճ կատարման դեպքում Շնորհառուն պարտավորվում է Շնորհապատճեն փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել փուլանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 փուլուսի չափով: Ընդ որում, փուլանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Շնորհապատճեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և փոխանցում է Շնորհառուին վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ_ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը

կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխադատել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պայտերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակով, 15 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Շ Ն Ո Ր Հ Ա Տ Ո Ւ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011018802

Հ/Հ/Հ 02508046

Ա. ԿՐԱԿՈՍՅԱՆ



Շ Ն Ո Ր Հ Ա Ռ Ո Ւ

Հայաստանի խաղողագործության և
գինեգործության հիմնադրամ
ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
Կոնվերտային ՓԲԸ

Հ/Հ 1930058282670100

00156064



Հավելված 1

2018թ. փետրվարի 5 -ին
կնքված N ՄՋ.Պ-9 պայմանագրի

Մ Ի Ջ Ո Ց Ա Բ Ռ Ի Մ Ն Ե Ր

հազար դրամ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը	Նկարագրությունը (բովանդակությունը)	Արդյունքը	Իրավական հիմքը	Գումարը
1	<p>ՀՀ խաղողագործական շրջանների խաղողի տնկարկների քարտեզագրման աշխատանքների իրականացում, «Խաղողի տնկարկների կարաստրի» հիմնում</p>	<p>ՀՀ Խաղողի այգիների կարաստրի ստեղծում</p>	<p>Ծրագրի շրջանակներում «Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի» (GIS) տեխնոլոգիաների, դաշտային այցելությունների միջոցով քարտեզագրվելու են հանրապետությունում առկա խաղողի տնկարկները և օգտագործելով ստացված բազան հիմնվելու է «Խաղողի տնկարկների կարաստր»: Տվյալների բազան թարմացվում է յուրաքանչյուր տարի Անշարժ գույքի կարաստրի պետական կոմիտեի կողմից տարվա ընթացքում կատարված փոփոխությունների, տեղական կատարման մարմինների և գյուղատնտեսության աջակցման մարզային կենտրոնների կողմից իրականացվող մոնիտորինգի արդյունքների հիման վրա:</p>	<p>Կարիքների գնահատում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնարամի կանոնադրության դրույթները</p>	<p>80,000.0 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության թիվ 2335-Ն 2005թ 29 դեկտեմբերի որոշումը, խաղողագործության մարզեր աշխատանքային խմբի գործուղումների ծախսերին, անհրաժեշտ հետազոտություններ ի արժեքներին, և համապատասխան մասնագետների վճարումներին հասնաձայն միջին շուկայական արժեքները</p>
2						

Գինու արտադրության որակի բարելավում

<p>2.1</p>	<p>Հանրապետության խաղողի սորտերի կենսաբազմազանության բացահայտում, վերհանում և պահպանում:</p>	<p>Առկա կոլեկցիոն տնկարանի պահպանում, լրացում, նոր յուրաքանչյուր ֆիդելիտետադինաց կոն պատվաստակայանների հիմքով կոլեկցիոն տնկարկների հիմնում:</p>	<p>Կոլեկցիոն տնկարկներում հավաքագրված խաղողի սորտերի անձնագրավորում (գենոտիպավորում և ֆենոտիպավորում), միասնական բազայի ստեղծում: Հավաքագրված և անձնագրավորված խաղողի սորտերի գինեգործական ներուժի հետազոտում: Խաղողի սորտերի գենետիկական և ֆենոտիպավորման անձնագրային տվյալների ինտեղնետային բազայի ստեղծում, պահպանում և թարմացում: Պահանջարկ վայելող հայտնի և նոր հետազոտված սակայն հետաքրքրություն ներկայացնող խաղողի սորտերի մայրուտների և տնկարանների հիմնում:</p>	<p>Գինեգործության համար ներուժ ունեցող սորտերի բացահայտում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնարկի կանոնադրության դրույթները</p>	<p>20,000.0</p>
<p>2.2</p>	<p>Խաղողի և գինու արտադրության որակի բարելավում</p>	<p>Կարողությունների զորացում</p>	<p>Խաղողի աճեցմամբ և գինու արտադրությամբ գրավվող մասնագետների վերապատրաստում Գինու ակադեմիայում: Հիմնարկում կապահովի շահառուների մասնակցությունը, իսկ ակադեմիան կապահովի համապատասխան մասնագետների մասնակցությունը:</p>	<p>Խաղողագործների և գինեգործների վերապատրաստում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնարկի կանոնադրության դրույթները</p>	<p>12,000.0 Հաշվի առնելով միջազգային մասնագետների դասընթացների միջին շուկայական արժեքները</p>
<p>3</p>	<p>Երկրի գինեգործության վարկանիշի և մրցունակության բարձրացում</p>					
<p>3.1</p>	<p>Գինեգործների և խաղողագործների միջազգային փորձի փոխանակում, գործարար միջավայրի բարելավում</p>	<p>Գինեգործների և խաղողագործների միջազգային փորձի փոխանակում, գործարար միջավայրի բարելավում</p>	<p>2017 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կանցկացվի "Գինու աշխարհ" համաժողովը, որի նպատակն է խաղողագործության և գինեգործության ոլորտի միջազգային և տեղական տիրույթների փորձի փոխանակումը: Համաժողովի ընթացքում տեղի կունենան նաև գինու և խաղողի արտադրությանը վերաբերող ուսուցողական նիստեր, նորագույն</p>	<p>Համաժողովի անցկացում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնարկի կանոնադրության դրույթները</p>	<p>15,000.0 Հաշվի առնելով Հայաստանի զարգացման հիմնարկային նմանատիպ միջոցառումների կատարած ծախսերը</p>

<p>3.2</p>		<p>Հայկական գինու ներկայացում միջազգային մրցույթներին</p>	<p>Ապահովել հայկական գինիների մասնակցությունը միջազգային բարձր վարկանիշ ունեցող գինու մրցույթներին և կազմակերպել հայկական գինիների համուտեսի երեկո միջազգային ոլորտի մասնագետների համար</p>	<p>Հայկական գինիների ճանաչելիության բարձրացում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնարկային կանոնադրության դրույթները</p>	<p>20,000.0 Հաշվի առնելով ՀՀ կառավարության թիվ 2335-Ն 2005թ 29 դեկտեմբերի որոշմամբ սահմանված արտասահմանյան գործուղումների սահմանաչափերը, Mundus Vini կայքում ներկայացված արժեքների և նախնական պայմանավորվածության վրա</p>
<p>3.3</p>		<p>Անդամակցություն համաշխարհային OIV գինու կառույցին</p>	<p>Տարեկան անդամավճար - 15.000 Եվրո, և մասնակցություն նիստին - 4.000.000 ՀՀ դրամ</p>	<p>Մասնակցություն OIV-ի նիստերին և ծրագրերի իրականացում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնարկային կանոնադրության դրույթները</p>	<p>12,000.0 Տարեկան անդամավճար - 15.000 Եվրո, և մասնակցություն նիստին - 4.000.000 ՀՀ դրամ (ճանապարհածախսը և մասնակցության գումարը)</p>

4	<p>Հայկական գինու մշակույթի զարգացում</p>	<p>Հայկական գինու ներկայացում հայ սպառողին և միջազգային փորձագետներն</p>	<p>Երեսնուամյակային ծառանգությունը: Փառատոնի շրջանակներում նախատեսվում է արտերկրից հրավիրել բլոգերներ, դիտորդություններ և սոմելյեներ: Միջոցառման ընթացքում հյուրերի թիվը կլինի մինչև 500 հոգու:</p>	<p>Միջոցառման կազմակերպում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնադրամի կանոնադրության դրույթները</p>	<p>15,000.0 Հաշվի առնելով փառատոնների կազմակերպչական ծախսերի միջին շուկայական արժեքը (Հայաստանի զարգացման հիմնադրամի և Արենի փառատոնի կողմից կատարված ծախսերի), և արտերկրի բլոգերների և դիտորդությունների այցի հետ կապված ծախսերը</p>
5	<p>Գինու արտահանման խթանում</p>			<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնադրամի դրույթները</p>	<p>74,000.0 Հաշվի առնելով ՀՀ կառավարության թիվ 2335-Ն 2005թ 29 դեկտեմբերի որոշմամբ սահմանված արտերկր գործուղման սահմանաչափերը</p>	
5.1	<p>Հայկական գինու արտահանման խթանում</p>	<p>2018 թ. կայանալիք «ProWine», «ProdExpo» Գերմանիա, Ռուսաստան և Ռուսաստանի հայտատանային գինեգործական ընկերությունների մասնակցության մասնակցությունը Զուգահանդեսին կընձեռի մասնակց հնարավորություն կընձեռի մասնակց ընկերություններին ներկայացնել հայկական գինիները, ինչպես նաև հանդիպել փոքր և միջին գնորդների, ինչպես նաև ղեկավարման գործունեությամբ զբաղվող անձանց հետ:</p>	<p>Մասնակցությոն և ցուցահանդեսներին</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնադրամի դրույթները</p>	<p>74,000.0 Հաշվի առնելով ՀՀ կառավարության թիվ 2335-Ն 2005թ 29 դեկտեմբերի որոշմամբ սահմանված արտերկր գործուղման սահմանաչափերը</p>	

5.2		<p>Նպատակային շուկաներում (Եվրոպա, Ռուսաստան և այլն) մասնակցել գինու համաժողովներին: Հարավոր է կամ կազմակերպել առանձին համաժողով, կամ այն ներառել այլ միջոցառման շրջանակներում: Մասնակցել առնվազն 4 համաժողով:</p>	<p>Մասնակցություն համաժողովներին</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնադրամի կանոնադրության դրույթները</p>	<p>10,000.0 Հաշվի առնելով ՀՀ կառավարության թիվ 2335-Ն, 2005թ. 29 դեկտեմբերի որոշմամբ սահմանված պարտերկիր գործուղման սահմանափակումները</p>
-----	--	--	--------------------------------------	---	---

Իրավական դաշտի կարգավորում

6	<p>Միասնական «Հայկական գինիներ» հովանոցային բրենդի Հայեցակարգի ստեղծում:</p>	<p>Խաղողագործություն և գինեգործության օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելը և դրանց մասնակցելը՝ ապահովելով օրենսդրական դաշտի ամբողջականացումը և համապատասխան նեցումը միջազգային չափանիշներին</p>	<p>«Հայկական գինիներ» բրենդային գինեգործական ներկայացվող պահանջների թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգի մշակում: Հայկական ապրանքները միջազգային շուկա հանելու համար պետք է առաջնորդվել միջազգային ստանդարտներով՝ անհրաժեշտ է սկսել ստանդարտների համապատասխանեցման գործընթացը: Այն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով Հիմնադրամը պետք է ստեղծի աշխատանքային խումբ՝ ոլորտի ներկայացուցիչների և միջազգային փորձագետների մասնակցությամբ: Աշխատանքային խումբը պետք է ուսումնասիրի և մշակի համապատասխան ստանդարտները: Միջազգային շուկա դուրս գալու նպատակով անհրաժեշտ է գինու որակի ստանդարտների համապատասխանեցում:</p>	<p>Գինու առկա ստանդարտներին վերանայում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնադրամի կանոնադրության դրույթները</p>	<p>32,000.0 Հաշվի առնելով միջազգային մասնագետների ծախսերի միջին շուկայական արժեքները, ինչպես նաև հետազոտման համար անհրաժեշտ ծախսերը, օրինակ՝ Լաբորատոր հետազոտություններ ի համար</p>
---	---	--	---	--	---	--

Հայաստանում գինու սպառման մշակույթի ձևավորման խթանում

7						
---	--	--	--	--	--	--

7.1	<p>Հայաստանում գինու սպառման մշակույթի ձևավորման խթանում</p>	<p>Հայաստանում տեղի ունեցող տարաբնույթ միջոցառումների ժամանակ (հասարակական վայրերում, խոշոր միջոցառումներին) տպագրված նյութերի ներկայացում:</p> <p>Հայկական գինու մշակույթը նկարագրող ճանաչողական տեսահոլովակի խմբագրում՝ առկա տեսահոլովակի հիման վրա: Ճանաչողական տեսահոլովակի տեղադրում գովազդային վառարաններին մինչև 2 ամիս ժամկետով:</p>	<p>Գովազդի տարածում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնարկի կանոնադրության դրույթները</p>	<p>5,000.0</p> <p>Հաշվի առնելով տեսահոլովակի նկարահանման և միջոցառումների կազմակերպման միջին շուկայական արժեքները</p>
7.2	<p>Հայաստանում գինու սպառման մշակույթի ձևավորման խթանում</p>	<p>Բարձրացնել իրազեկվածության տարբեր միջոցառումների միջոցով բնակչության մակարդակը մասնագիտական</p>	<p>համունների, վարպետության և դասերի, հեռուստահաղորումների կազմակերպում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից հաստատված Հիմնարկի կանոնադրության դրույթները</p>	<p>5,000.0</p> <p>Հաշվի առնելով տեսահոլովակի նկարահանման և միջոցառումների կազմակերպման միջին</p> <p>300,000.0</p>

Շ Ն Ո Ր Հ Ա Տ Ո Ւ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Քերթևեկ, Կարգավարական շենք 3
 Գինանոցների նախարարության
 աշխարհային գործառնական վարչություն
 ՀՀ 900011018802
 ՀԱՀ 02508046

Ա. Կիրակոսյան
 4. 5

Շ Ն Ո Ր Հ Ա Ռ Ո Ւ

Հայաստանի խաղողագործության և
 գինեգործության հիմնարկում
 ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
 Կոնսերվացիայի ՓԲԸ

1930058282670100
 ՀԱՀ 00156064

Գ. Երևան
 2

Հավելված 2
 2018 թվականի *հունիսի 29*
 5-ին կերպով N
 24.8.2-9 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության,
 գերադասության, պետական
 կառավարման փարաֆային
 մարմնի անվանումը

Ծրագրի անվանումը

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության
 խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարկեր
 պետական բաղադրամասնության ու գարգացման ծրագրերի
 իրականացմանը»


1	2	Նախատեսվում է իրականացնել 2018 թվականի ընթացքում, ընդ որում անողական				Տանրություն Ե
		1 Եռամսյակ բանակ ը	2 Կիսամյա բանակ ը	3 Ինն ամիս բանակ ը	4 Վարկի բանակ ը	
1	Միջոցառման անվանումը	3	4	5	6	7
1	Աջակցություն Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը	5	10	15	20	
		1	2	3	3	
	2					
	Ցուցահանրաներին, համեմատներին, փորձի փորձամասերին, պրոտո և կազմակերպվող այլ միջոցառումներին մասնակցող գինու գործարանների քանակը (հատ)					
	Ցուցահանրաներին, համեմատներին, փորձի փորձամասերին, պրոտո և կազմակերպվող այլ միջոցառումներին մասնակցող գինու և կրթական հաստատություններ (քանակը հատ)					

Շ Ն Ո Ր Հ Ա Ս Ո Ւ

Գյուղատնտեսության նախարարություն
 Գերական կառավարական շենք 3
 Ֆրանսիայի նախարարության աշխատակազմի
 գործարանային-վարչություն
 ՀՀ 900011018802
 ԿԿՏ 2508046
 Ա. ԿՐԿՆՅԱՆ
 45

Շ Ն Ո Ր Հ Ա Ռ Ո Ւ

Հայաստանի խաղողագործության և գինեգործության
 հիմնադրամ
 ք. Երևան, Սամիկյանց 39ա
 Կոնկերտանկ ՓԲԸ



Հավելված 3

2018 թվականի հունվարի 5 ին
 հրձիվ N 24.02.01 Յայտանազարի

ԿՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՈՒՅՑ

1. Հիմնարկի անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
2. Բյուջեդրոյին ծախսերի գործառնական դասակարգման

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախ	Լախ
04	02	01	24	104007	


Ծրագրի անվանումը

«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խարտագործության և գինեգործության ոլորտներում վարժող պետական բարձրակարգ մագիստրանտների կազմակերպմանը»
 հազ. դրամ

Խ/Կ	Ձեռք բերվող ծախսերի անվանումը	Բյուջեդրոյին ծախսերի հոդվածը	Միավորների քանակ	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեից, ընդ որում աճողական														
				1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
				Ի տրամադրվում է	I կիսամյակ			II կիսամյակ			ինն ամիս			զտադրվում է				
				Կիսամյակ	Հունիս	Յուլի	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Կիսամյակ	Կիսամյակ	Կիսամյակ	Կիսամյակ	Կիսամյակ	Կիսամյակ	Կիսամյակ
1	Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խարտագործության և գինեգործության ոլորտներում վարժող պետական բարձրակարգ մագիստրանտների կազմակերպմանը	4639	300,000,0	25,000.0	50,000.0	75,000.0	100,000.0	150,000.0	175,000.0	200,000.0	225,000.0	250,000.0	275,000.0	300,000.0				

Շ Ն Ո Ղ Հ Ա Ս Ո Ւ


ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
 Բ. Երևան, Կոմիտասի պող. 2/եջ 3
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 ՀՀ 900011018802
 ՀՀ 02508046



Ա. Կրիստյան
 ԿՏ

Շ Ն Ո Ղ Հ Ա Ս Ո Ւ

Հայաստանի խարտագործության և գինեգործության հիմնադրամ
 Բ. Երևան, Մամիկոնյանց 39ա
 Կոնսլետարանի ՓԲԸ
 ՀՀ 1930058282670100
 ՀՀ 00156064



2018 թվականի *Հայելված 4*
Ապրիլի 5-ին
 կնքված N պայմանագրի
ՆԱԳ-Ց.

Հ Ա Շ Կ Ե Տ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԻՄՆԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱՆՏԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԵՐԻ ՄԱՐԻՆ
 01 _____ - 01 _____ ժամանակահատվածի համար

- Հիմնարկի անվանումը Հայաստանի խարուղագրորդության և գինեգործության հիմնադրամ
- Փոստային հասցեն ք. Երևան, Մամիկոնյանց 39Ա, 0051
- Հիմնարկի տերաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
- Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
- Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ 1 (ՀՀ պետական բյուջե 1, համայնքի բյուջե՝ 2)

6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

04
02
01

7. Ծրագրի կոդ

24

8. Ծրագրի անվանումը Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խարուղագրորդության և գինեգործության ոլորտներում վարկով պետական քաղաքականության ու գարբացման ծրագրերի իրականացմանը

9. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը

104007

10. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները	Տարեկան հաստատված տարեկան նախահաշիվ		Փոփոխություններ տարեկան նախահաշվում			Տարեկան ծշտված նախահաշիվ	Ֆինանս- սավորում	Դրամարկ- դային ծախս	Փաս- տացի ծախս	Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր)	Դրա- մարկի մնացորդ	
		ՀՀ օրենք (համայնքի ակազանու որոշում)	ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում)	Վերադասի կողմից	Ե	Զ							Է
U	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը=Գ+Ե+Զ+Է	Թ	ժ	ժԱ	ժԲ	ժԳ	ժԴ
1100000	Ընթացիկ ծախսեր	X											
	այդ թվում												
----	-----												

1150000	5. Դրամաշնորհներ	X													
1167100	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և իսմայնթային պետական յոչ առևտրային կազմակերպություններին	4639													
1000000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000)	x													

_____ 2018թ.

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ _____ (ստորագրություն) _____ (Ա.<Ա.)

Կ. Տ.

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ (ստորագրություն) _____ (Ա.<Ա.)

ՀԱՆՎԱՊԱՀ _____ (ստորագրություն) _____ (Ա.<Ա.)